



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

22.12. 2021 թ.

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի հայրենակիցներ, սիրելի կոտայքցիներ,

Եվս մեկ օր և պատմություն կդառնա նաև 2021 թվականը:

Մեր քաղաքացիների կյանքի որակի բարելավմանն ուղղված բազմաթիվ ծրագրերին զուգահեռ, 2021 թվականը շարունակեց ուղեկցվել փորձություններով ու մարտահրավերներով՝ համավարակ, պատերազմի հետևանքով առաջ եկած լրջագույն խնդիրներ, որոնք փորձեցինք հաղթահարել տրնաջան աշխատանքով, համբերատարությամբ և լուսավոր գալիքի նկատմամբ անսահման հավատով:

Սիրելի կոտայքցիներ,

Բնականաբար, 2022 թվականը դիմավորում ենք նոր սպասումներով, հույսերով ու ապագայի հանդեպ ավելի լայն հեռանկարով:

Ցանկանում եմ, որպեսզի գալիք տարին մեր երկրի համար լինի խաղաղության տարի, և 2022 թվականը դառնա այն պարարտ հողը, որն անհրաժեշտ է մեր հայրենիքին՝ շենանալու, հզորանալու, զարգանալու՝ ի շահ և ի բարօրություն մեր քաղաքացիների:

Իսկ մենք՝ բոլորս, ամուր գրկենք ու փայփայենք մեր ջրնաղ հայրենիքը՝ այն հստակ գիտակցումով, որ միմիայն մեր միասնությամբ և համախմբմամբ ենք ունենալու Հզոր ու Երջանիկ Հայաստան աշխարհ:

Խոնարհում հայրենիքի խաղաղության համար նահատակված մեր բոլոր հայորդիների հիշատակին և փառք այս պահին սահմանին կանգնած մեր բոլոր զինձառայողներին:  
Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ